# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԹԵՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 1-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, բարձր նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Թեմական ներկայացուցչական չորրորդ ժողովը, որին մասնակցում էին Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունների ներկայացուցիչներ, Ամենայն Հայոց Կաթողիկոսության Հայաստանի եւ Սփյուռքի երեսուներկու թեմերի առաջնորդներ, Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամներ եւ Հայրապետական պատվիրակությունների ու թեմերի աշխարհական ներկայացուցիչներ:

Ժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո ժողովականներին ողջունեց Թեմական ներկայացուցչական ժողովի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը՝ անդրադառնալով ժողովի կարեւորությանն ու նպատակներին եւ հրավիրելով Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայրապետական իր պատգամն ուղղել ժողովին:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց հավաքի մասնակիցներին, որ նախանձախնդիր ու պատրաստակամ հոգով համախմբվել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Վեհափառ Հայրապետը աղոթքով հիշեց ի Տերն հանգուցյալ Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին եւ Հնդկաստանի եւ Ծայրագույն Արեւելքի Հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի ու Նոր Զելանդիայի Հայոց Առաջնորդ Աղան արքեպիսկոպոս Բալիոզյանին՝ հայցելով, որ Ողորմածն Աստված երկնային երանության մեջ ընդունի նրանց հոգիները եւ Սուրբ Հոգու շնորհների ներքո պահպանի Հայոց Եկեղեցին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւորեց Թեմական ներկայացուցչական հերթական ժողովը, որի նպատակն է լուծման առաջնորդել եկեղեցական կյանքում առկա հարցերն ու խնդիրները՝ ի նպաստ Եկեղեցու փիրավանդ առաքելության զորացման: «Իրողություն է, որ եկեղեցական եւ ազգային մեր կյանքն այսօր ի սփյուռս աշխարհի դարձել է առավել փոխշաղկապված, քան տասը կամ նույնիսկ հինգ տարի առաջ էր: Ազատ եւ անկախ մեր պետականության պայմաններում շարունակ զորանում են Հայրենիք-Սփյուռք կապերը, արդյունավորվում համատեղ ծրագրերն ու միջոցառումները, ինչը նաեւ ենթադրում է, որ առավել դյուրին պիտի լինեն մեզ հուզող հարցերի եւ մեր առջեւ կանգնած հրամայականների կարգավորումները», - ասաց Վեհափառ Հայրապետը:

Անդրադառնալով եկեղեցական կյանքում նշմարելի բարեփոխումներին ու դրական տեղաշարժերին՝ Ամենայն Հայոց Հայրապետն ընդգծեց, որ հարկ է բարեպատեհ ժամանակը ծառայեցնել իր նպատակին: «Ժամանակն է, որ մեր եկեղեցական կյանքը մի նոր որակ ձեռք բերի՝ խարսխված եկեղեցական-կանոնական հիմքերի վրա, առաջնորդվելով կառուցվածքային եւ կազմակերպական հստակ մոտեցումներով ու դրույթներով: ժամանակն է իրականացնելու կանոնական, ծիսական եւ վարչական բարեկարգությունները, որոշակիացնելու եւ բանաձեւելու մեր օրերում բարձրացող հարցադրումների վերաբերյալ Հայ Եկեղեցու դիրքորոշումները, որպեսզի առավել արդյունավետ լինի մեր Եկեղեցու առաքելությունը եւ շարունակ աճող ու զարգացող՝ հավատավոր մեր զավակների հոգեւոր կյանքը: Եկեղեցական եւ ազգային մեր կյանքի դրական զարգացումների ու ձեռքբերումների կողքին վճիռներ պահանջող շատ հրամայականներ ու մարտահրավերներ ունենք: Հայրենիքում եւ Սփյուռքի որոշ թեմերում լիովին կազմակերպված չեն ծխական համայնքները: Շատ համայնքներ, հատկապես եվրոպական երկրներում, որոնք առաջացել են մեր ժողովրդի տեղաշարժերի արդյունքում, չունեն կանոնադրություն, մնայուն քահանաներ, աղոթատեղիներ: Հայրենիքում նույնպես աղոթատեղիներ եւ մնայուն քահանաներ չունեն քաղաքային եւ գյուղական բազմաթիվ համայնքներ, իսկ մեծ թվով վանքեր ու սրբա-

պեղիներ կարիք ունեն հիմնանորոգման: Այցելու հոգեւորականի սպասավորությունը, որքան եւ ջանք ներդրվի, չի ապահովում ցանկալի արդյունք: Սփյուռքի համայնքներում շարունակում են օրախնդիր մնալ ազգային ինքնության, հայոց լեզվի ու հայկական դպրոցների պահպանության հրամայականները: Խնդիր ունենք երիտասարդությանը ավելիով ներգրավելու եկեղեցական ու ազգային կյանքի մեջ: Այսօր համընդհանուր աշխարհիկացման պայմաններում նահանջում է հոգեւորի կարեւորության գիտակցումը, բազում հավատացյալներ կապված են մնում եկեղեցուն ավելի ավանդույթի ուժով, քան՝ կրոնական խորը ապրումով ու գիտակցումով: Հայաստանում եւ Արցախում ժողովուրդը ապրում է շարունակվող շրջափակման եւ պատերազմի վերսկսման վտանգի պայմաններում՝ դիմակայելով տնտեսական եւ ընկերային լուրջ դժվարությունների, ինչպիսիք են աղքատությունը, գործազրկությունը, արդյունքում եւ՝ արտագաղթը: Օգտվելով ժողովրդի նեղյալ վիճակից, հոգեորսություն են իրականացնում աղանդավորական կազմակերպությունները», - նշեց Նորին Սրբությունը՝ շեշտելով, որ այս մարտահրավերներին պատասխաններ որոնելու նպատակին է կոչված Թեմական ներկայացուցչական ժողովը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրատապ նկատեց սիրիահայությանն օգնելու հարցը: «Այսօր համայն մեր ժողովրդի հայացքը տագնապով ուղղված է դեպի Սիրիա, որտեղ պատերազմական իրավիճակի բոլոր դժվարությունները կրում է նաեւ հայ համայնքը: Սիրիաբնակ Մեր զավակները կարիք ունեն շտապ եւ մեծ օգնության ու սատարումի», - ասաց Նորին Սրբությունը՝ տեղեկացնելով, որ Մայր Աթոռի կողմից Դամասկոսի հայոց թեմին արդեն փոխանցվել է 200.000 ԱՄՆ դոլար, հույս հայտնելով, որ առաջիկային թեմերից ակնկալվող օժանդակությամբ Մայր Աթոռը կկարողանա ավելի մեծ գումար փոխանցել՝ սիրիահայության կարիքները հոգալու համար:

Ժողովի օրակարգային հարցերից էր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպումը: «Տարելիցն առանձնահատուկ է, եւ այն պիտի ոգեկոչենք առանձնահատուկ հնչեղությամբ՝ հանգրվան դարձնելով մեր արդար դատի հաղթանակի ճանապարհին: Այսօր աշխարհի տարբեր պետություններ, միջազգային կազմակերպություններ, Քույր եկեղեցիներ՝ առաջնորդվելով ճշմարտության եւ արդարության սկզբունքներով՝ ճանաչել եւ դատապարտել են Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը: Բարեհույս այս ընթացքը զորացնում է մեր ժողովրդի լավատեսությունը, որ այն կգտնի համընդհանուր դատապարտում: ...100-ամյա տարելիցը առիթ է նաեւ հոգեւոր եւ ազգային մեր կյանքի զորացման, հերոսական մաքառումով ու ջանքերով վերածնված մեր կյանքի արժեւորման եւ լուսավոր գալիքի հույսերի ամրապնդման, որոնց նույնպես պիտի ուղղված լինեն նախատեսվող ծրագրերն ու միջոցառումները», - ընդգծեց Նորին Սրբությունը՝ տեղեկացնելով, որ 100-ամյակին նվիրված Հայոց Եկեղեցու միջոցառումները համադրելու եւ կազմակերպելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով՝ Գերաշնորհ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի ատենապետությամբ: Նորին Սրբությունը հորդորեց թեմական ներկայացուցիչներին համագործակցել հանձնաժողովի հետ, որպեսզի համայն մեր ժողովրդի եւ հայրենի պետության հետ Հայոց Եկեղեցին ամբողջական պատրողությամբ հիշատակի 100-ամյա տարելիցը Հայոց ցեղասպանության:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Մայր Աթոռի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից համատեղ կազմված Սրբադասման եւ Ծիսական հանձնաժողովների կատարած աշխատանքներին, որոնք ներկայացվելու են Եպիսկոպոսաց ժողովի քննարկման: Սրբադասման հանձնաժողովն աշխատանքներ է իրականացրել սրբադասման սկզբունքների, կանոնի եւ ծեսի մշակման ուղղությամբ եւ ուսումնասիրել ցեղասպանության նահատակների սրբադասման խնդիրը: Ծիսական հանձնաժողովը կատարել է մկրտության ծեսի կանոնի մշակման աշխատանքը, ինչը հնարավորություն կտա, որ Եկեղեցու ծեսերն ամենուր կատարվեն առանց աղավաղումների, միակերպ ու անխաթար:

Խոսելով Եկեղեցու Սահմանադրության մշակման աշխատանքների եւ, ի մասնավորի, 2009 թ. թեմական ներկայացուցչական ժողովին ընդունված թեմական կանոնադրության ուղենիշի գործադրության մասին՝ Նորին Սրբությունը նշեց, որ թեմական տիպային կանոնադրության ուղենիշը թեմական ներկայացուցչական ժողովի կողմից մշակվել եւ թեմերին գործադրության է հրահանգվել եկեղեցական մեր կյանքը կանոնական հիմքերով կառուցելու, միասնական սկզբունքներով առավել ամուր կազմակերպելու, մեր սրբազան ավանդությամբ մեր Եկեղեցին զորացնելու նպատակով: Գարեգին Բ. Հայրապետն անհրաժեշտ նկատեց նաեւ ձեռնամուխ լինել Սահմանադրության մյուս, ի մասնավորի՝ Ազգային եկեղեցական ժողովի, Գերագույն հոգեւոր խորհրդի, Եպիսկոպոսաց ժողովի եւ Թեմական ներկայացուցչական ժողովի գլուխների մշակմանը, որպեսզի առանձին բաժինների մշակումով ամբողջանա Եկեղեցու Սահմանադրությունը:



ՀՀ վարչապետը Մայր Աթոռում



ՀՀ նախագահը Մայր Աթոռում

Վեհափառ Հայրապետի խոսքում անդրադարձ եղավ նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների եւ աշխարհասփյուռ թեմերի անխոչընդոտ եւ անկաշկանդ առնչություններին, ինչպես նաեւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ գործակցային հարաբերություններին:

Վերջում արդյունավոր աշխատանք մաղթելով ժողովին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց աննվազ ջանքերով գործել՝ իրականացնելու անհրաժեշտ բարեկարգությունները, որպեսզի Եկեղեցին առավել արդյունավոր իրագործի փիրավանդ իր առաքելությունը եւ դյուրին կերպով կարողանա դիմագրավել դժվարություններն ու փորձությունները, որոնց առավել չափով ենթակա է աշխարհասփյուռ հայ ժողովուրդը:

Ժողովականները քննարկեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների (Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն, Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքություններ) հետ հարաբերությունների մասին զեկույցը:

Երուսաղեմի Հայոց Պատրիարքության եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության մասին տեղեկություններ հաղորդեցին Երուսաղեմի պատրիարքական փեղապահ Տ. Արիս արք. Շիրվանյանը եւ Կ. Պոլսի Աթոռի ներկայացուցիչ Տ. Սահակ եպս. Մաշալյանը: Անդրադառնալով Երուսաղեմի Ս. Աթոռի կարեւոր պատմական առաքելությանը Սրբոց Տեղյաց պահպանության գործում՝ ժողովականներն Աստծու զորակցությունը մաղթեցին Երուսաղեմի պատրիարքական տեղապահին՝ առաջիկա պատրիարքական ընտրությունների կազմակերպման գործում: Ժողովը նաեւ ընդգծեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության կարեւոր դերակատարությունը Թուրքիայում հայության ազգային-եկեղեցական կյանքում: Մտահոգություն հայտնելով Պատրիարքության ներկայիս կացության եւ Կ.Պոլսո Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի առողջական վիճակի առնչությամբ, ժողովը որոշեց խնդրել Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ թելադրել Կ. Պոլսի կրոնական ժողովին՝ կազմակերպելու պատրիարքական ընտրություններ՝ ի խնդիր Կ.Պոլսո Ս. Աթոռի զորացման եւ Թուրքիայի հայության պայծառության:

Տեղի ունեցավ դիվանի եւ հաշվիչ հանձնախմբի ընտրություն: Քվեարկությամբ ժողովի ատենապետների պաշտոն ստանձնեցին ԱՄՆ Արեւմտյան Հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը եւ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, փոխատենապետ՝ փիար Պատրիս Ջոլոյանը (Ֆրանսիայի Հայոց թեմ) եւ Ռաֆֆի Հովհաննիսյանը (ԱՄՆ Արեւելյան Հայոց թեմ):

Ժողովի նոյեմբեր 2-ի նիստին իր մասնակցությունը բերեց ՀՀ վարչապետ, Արարատյան Հայրապետական թեմի թեմական խորհրդի ատենապետ փիար Տիգրան Սարգսյանը:

Նոյեմբերի 2-ի նիստերին Ամենայն Հայոց Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության կողմից ստեղծված Սրբադասման հանձնախմբի կատարած աշխատանքների մասին զեկույց ներկայացրեց հանձնախմբի համաատենապետ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը: Սրբազան Հայրն անդրադարձավ սրբադասման սկզբունքների, կանոնի եւ ծեսի մշակման հարցերին, մասնավորապես Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման խնդրին: Ժողովականները, ողջունելով հանձնաժողովի ցարդ կատարած ուսումնասիրությունները, քննարկումների ընթացքում ներկայացրեցին իրենց առաջարկները եւ հորդորեցին շարունակել հանձնաժողովի գործունեությունը՝ հրապարակ նկատելով Ցեղասպանության անմեղ զոհերի սրբադասումը:

Թեմերում 2009 թ. ներկայացուցչական ժողովի կողմից ընդունված թեմական կանոնադրության ուղենիշի որդեգրման վերաբերյալ  զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Քննարկումների ընթացքում վերահաստատվեց կանոնական եւ միասնական սկզբունքների վրա եկեղեցական կյանքի կազմակերպման անհրաժեշտությունը եւ, նկատի ունենալով, որ որոշ թեմեր դեռ ի վիճակի չեն եղել ուղենիշին համապատասխանեցնել կանոնադրությունները, որոշվեց մեկ տարով երկարացնել ուղենիշի հոդվածները թեմական կանոնադրություններում ներդնելու ժամկետը:

ՀՀ վարչապետը, ՀՀ կառավարության անունից ողջունելով ժողովականներին, անդրադարձավ մի շարք հարցերի: «Անժխտելի է այն դերակատարությունը, որը հայ ժողովրդի պատմության մեջ ունեցել է եւ ունի Հայ Առաքելական Եկեղեցին: Շնորհիվ մեր հավատքի, եկեղեցու շուրջ մեր համախմբվածության՝ այսօր ունենք պետություն եւ համատեղ ջանքերով լուծում ենք այն խնդիրները, որոնք մտահոգում են մեր ժողովրդին: Ինչպես դարեր ի վեր, այնպես էլ այսօր Հայ Առաքելական Եկեղեցու օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնք մտահոգում են մեր ժողովրդին եւ մենք ձեզ հետ փորձում ենք գտնել պատասխաններ, որոնք առաջնորդելու, օժանդակելու եւ ծառայելու են մեր ժողովրդին», - նշեց ՀՀ վարչապետը:

Նա մասնավորապես անդրադարձավ ժամանակակից հասարակության առջեւ ծառացած մարտահրա-

վերներին. «Իմ համոզմունքն այն է, որ իրականում մենք գործ ունենք արժեքային ճգնաժամի հետ եւ ժամանակակից մարտահրավերների հաղթահարման բանալին հենց այդ ոլորտում է պետք որոնել: Սպառողական հոգեբանությունը, սուրբ առաքելական արժեքներից հեռանալը ցանկացած հասարակության համար ստեղծում է լուրջ եւ անհաղթահարելի բարդություններ: Նմանատիպ խնդիրներ այսօր կանգնած են նաեւ հայ ժողովրդի առջեւ: Համոզված եմ, որ այն արդիական մարտահրավերները, որոնք առկա են, մենք կարող ենք հաղթահարել, եթե ապավինենք մեր հավատքին, համախմբվենք մեր հավատքի շուրջ, հզորացնենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, ամրապնդենք կապը պետության եւ Եկեղեցու միջեւ: Սա է լինելու այն բանաձեւը, որն օգնելու է մեզ հաղթահարել նորագույն մարտահրավերները»:

ՀՀ վարչապետն արծարծեց նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի նախապատրաստական աշխատանքների ուղղվածությանը, ինչպես նաեւ սիրիահայությանը ցուցաբերվող օգնությանն առնչվող հարցեր:

Տիար Տ. Սարգսյանը, բարձր գնահատելով այսօր Եկեղեցու եւ պետության ներկա հարաբերությունները, համոզում հայտնեց, որ այս ժողովի որոշումները կնպաստեն Հայոց Եկեղեցու ամրապնդմանը:

Իր հերթին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով ՀՀ վարչապետի մասնակցությունը ժողովին, իր օրհնությունը բերեց նրան՝ գնահատելով Հայրենիքին նվիրյալ փիար Տիգրան Սարգսյանի ջանքերը եւ ընդգծելով նրա առանձնահատուկ ջերմ ու նախանձախնդիր վերաբերմունքը հանդեպ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ժողովի նոյեմբերի 3-ի նիստին, ընդառաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերի, ներկա գտնվեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը:

Նիստին ՀՀ նախագահի ներկայությունը ողջունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Խոսելով եկեղեցի-պետություն հարաբերությունների մասին՝ Վեհափառ Հայրապետը նշեց. «Այս բարեպատեհ առիթով Մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեզ եւ Ձեր գլխավորությամբ հայրենի իշխանություններին մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանն աջակցելու, ըստ ամենայնի եկեղեցի-պետություն հարաբերությունների արդյունավորմանը զորակցելու եւ շարունակական ուշադրության ու սատարումի համար, որ ցուցաբերում է հայրենի պետությունը՝ հանուն մեր Սուրբ Եկեղեցու պայծառության եւ շինության: Գոհունակություն է Մեզ համար հաստատել, որ Հայաստանի Հանրապետությունը մեծապես աջակից է նաեւ Սփյուռքի մեր թեմերի գործունեությանը՝ հատկապես դիվանագիտական ծառայությունների աշխատակիցների միջոցով, ովքեր իրենց կարեւոր առաքելությանը զուգահեռ բարի գործակցությամբ մեծապես սատար են լինում թեմերի հոգեւոր-եկեղեցական առաքելությանը»:

Անդրադառնալով Հայ Եկեղեցու Սահմանադրության ամբողջացման խնդրին՝ ժողովը թելադրեց նախորդիվ ստեղծված հանձնաժողովին՝ հետամուտ լինելու Սահմանադրության մեջ ներառնվելիք մնացյալ՝ Ազգային եկեղեցական ժողովի, Գերագույն հոգեւոր խորհրդի, Եպիսկոպոսաց ժողովի եւ Թեմական ներկայացուցչական ժողովի գլուխների մշակմանը: Թեմական ներկայացուցչական ժողովի առնչությամբ ժողովականները քննարկումների արդյունքում որոշեցին այն վերանվանել Հայ Եկեղեցու Եկեղեցական ներկայացուցչական ժողով, ինչպես նաեւ սահմանեցին ժողովի պատգամավորների կազմը՝ 1/3 հոգեւորական եւ 2/3 աշխարհական հարաբերակցության սկզբունքով:

Սիրիայում ստեղծված կացության եւ սիրիահայ համայնքի վիճակի մասին զեկուցեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը: Այս առնչությամբ ժողովը մտահոգություն արտահայտեց Սիրիայում շարունակվող հակամարտության եւ ժողովրդի կրած կորուստների կապակցությամբ՝ իր զորակցությունը հայտնելով Սիրիայի հայ համայնքին: Գոհունակություն արտահայտվեց սիրիահայությանը եւ Սիրիայում ազգային-եկեղեցական կառույցներին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ հայրենի իշխանությունների կողմից ցուցաբերված օգնության համար, բայցեւ կոչ արվեց թեմերին եւ ազգային հաստատություններին շարունակելու իրենց զորակցությունը բերել հայ համայնքին՝ առկա կարիքները հոգալու եւ կրած կորուստները լրացնելու համար:

Ժողովն ավարտվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ ու գնահատանքի խոսքով: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ժողովի մասնակիցներին կատարված նախանձախնդիր աշխատանքի համար՝ վստահություն հայտնելով, որ առնված որոշումները պիտի ծառայեն մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքի զորացմանը եւ Հայոց Եկեղեցու առաքելության արդյունավոր իրագործմանը:

Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն հայտնեց, որ Թեմական ներկայացուցչական ժողովը համանկեղեցական իր ընդգրկվածությամբ բարի արդյունքներ արձանագրելով՝ անսպառ կծառայի հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքի զորացմանը: Վերջում Նորին Սրբությունը իր բարեմաղթանքը եւ օրհնությունը բերեց ՀՀ նախագահին՝ հայցելով, որ Աստծո ամենախնամ Սուրբ Աջը մշտապես հովանի լինի մեր Հայրենիքին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Այնուհետեւ ժողովականներին ողջերձով դիմեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: «...Կասկածից վեր է, որ ներկա ժողովը, եւ ընդհանրապես Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ողջ գործունեությունը, միայն կրոնական կազմակերպության հարց չէ, այլ ունի համահայկական ընդգրկում եւ նշանակություն. ավելին՝ մեզ համար այն ունի նաեւ մշակութային, ազգապահպան եւ քաղաքական նշանակություն: Սա պատմականորեն ձեւավորված իրողություն է», - ողջույնի իր խոսքում նշեց ՀՀ նախագահը՝ ընդգծելով, որ այսուհետ եւս եւ ավելի մեծ չափով Հայ Առաքելական Եկեղեցին կարող է ակնկալել հայոց պետականության համակողմանի աջակցությունը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, անդրադառնալով ժողովի օրակարգին, նշեց. «Այստեղ քննարկվող հարցերն իսկապես օրախնդիր են: Բոլորիս ցանկությունն է ավելի մոտ լինել մեր ժողովրդին, նրա հոգսերին ու ցավերին, պատասխաններ գտնել նրա հարցերին, որովհետեւ ժողովրդի ակնկալիքները Մայր Եկեղեցուց շատ մեծ են: Սա արդյունք է դարերով վաստակած անվերապահ հեղինակության...»: ՀՀ նախագահը խոսեց նաեւ սփյուռքահայության խնդիրների մասին՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը եւ ընդգծելով, որ այս առնչությամբ անելիքներ ունեն ամենքը՝ եւ՛ Եկեղեցին, եւ՛ պետությունը, եւ՛ Սփյուռքի համայնքները:

Նիստի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պատասխանեց նաեւ ժողովականների հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 13-րդ տարեդարձի առիթով Ս. Պատարագի ավարտին կատարվեց Հայրապետական մաղթանք:

Սրբազան արարողություններին ներկա էին նոյեմբերի 1-3-ը Թեմական ներկայացուցչական չորրորդ ժողովի առիթով Մայր Աթոռ ժամանած Երուսաղեմի եւ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունների ներկայացուցիչները, Ամենայն Հայոց Կաթողիկոսության Հայաստանի եւ Սփյուռքի երեսուներկու թեմերի առաջնորդները, Հայրապետական պատվիրակությունների ու թեմերի աշխարհական ներկայացուցիչները, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները եւ բազում ուխտավորներ:

Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցեց Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունից Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը: Նա իր քարոզում, հանուն Հայ Եկեղեցու եկեղեցականաց եւ աշխարհականաց դասի շնորհավորելով Ամենայն Հայոց Հայրապետին գահակալության տարեդարձի առիթով, անդրադարձավ Մայր Աթոռի կարեւոր դերակատարությանը Հայ Եկեղեցու միասնականության պահպանման գործում:

Ս. Պատրագից հետո, հանդիսապետությամբ Երուսաղեմի պատրիարքական փոխանորդ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանի, Իջման Ս. Սեղանի առջեւ կատարվեց Հայրապետական մաղթանքի արարողություն, որի ընթացքում ներկաներն աղոթք վերառաքեցին Երկնավոր Տիրոջը՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության ու պայծառության եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կենաց արեւշատության եւ քաջառողջ ու բեղուն բազմամյա գահակալության համար:

Արարողությունն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Պահպանիչ» աղոթքով, որից հետո հայրապետական թափորն ուղղվեց դեպի Մայր Աթոռի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի, որի առջեւ տեղի ունեցավ Նոր Ջուղայի ԺԶ., ԺԷ. դարերի խաչքարերի օրինակով պատրաստված երեք խաչքարերի օրհնության արարողությունը: Խաչքարերը (խաչքարագործ՝ Վարազդատ Համբարձումյան) տեղադրվել են բարերարությամբ փիար Հրաչյա Պողոսյանի (Սանկտ-Պետերբուրգ, ՌԴ)՝ ի հիշատակ Արցախյան հերոսամարտում, Հայրենական մեծ պատերազմում եւ Սպիտակի երկրաշարժից զոհված հայորդիների:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀՈԳԵՒՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Նոյեմբերի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Բուլղարիայի Հայոց թեմի նախաձեռնությամբ Հայաստան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Բուլղարիայի հոգեւոր առաջնորդների պատվիրակությունը: Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Աբգար վարդապետ Հովակիմյանի եւ թեմական խորհրդի ատենապետ Ռուբեն Գրիգորյանի ուղեկցությամբ ժամանած պատվիրակության կազմում են Վառնայի եւ Վելիկոբրեսլավսկի միտրոպոլիտ Կիրիլ արքեպիսկոպոսը (Բուլղար Ուղղափառ Եկեղեցի), կրոնի նախարարության ներկայացուցիչ Էմիլ Վելինովը (Բուլղար Ուղղափառ Եկեղեցի), Բուլղարիայի Կաթոլիկ նվիրակության ներկայացուցիչ Հայր Պետկո Վլովը, Բուլղարիայի Բողոքական եկեղեցիների նախագահ Նիկոլայ եպիսկոպոս Նեդելչեւն ու Բուլղարիայի Համախմբված Բողոքական եկեղեցիների գլխավոր քարտուղար Նիկոլայ Չեռնեւը, Բուլղարիայի Հրեական հոգեւոր խորհրդի նախագահ Ռոբերտ Ջեռասը, Բուլղարիայի իսլամական համայնքից՝ Մուֆթի Բիբիրլի Մյումյուն եւ Բուլղարիայի մուֆթիության գլխավոր քարտուղար Ահմեդ Ահմեդովը:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պատվիրակությանն ընդունեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Բուլղարիայի Հայոց թեմի առաջնորդական տեղապահը, ներկայացնելով պատվիրակության անդամներին, ընդգծեց, որ այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ Հայաստան լավագույն առիթը պիտի հանդիսանա Բուլղարիայի հոգեւոր առաջնորդների համար՝ հաղորդակից դառնալու հայ ժողովրդի հոգեւոր ու մշակութային արժեքներին:

Ողջունելով պատվիրակության այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց Բուլղարիայի հայոց թեմի՝ պատվիրակությանը Հայաստան հրավիրելու նախաձեռնությունը, ինչն առավել կզորացնի կապերը կրոնական հարանվանությունների միջեւ: Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ Բուլղարիայի կրոնական հարանվանությունների միջեւ եղբայրական սերտ հարաբերություններ են ձեւավորվել:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ հայ եւ բուլղար ժողովուրդների պատմական ջերմ կապերին, ինչպես նաեւ Հայ Եկեղեցու միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին:

Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները փոխանցեց Բուլղար Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Մաքսիմ Պատրիարքին, ինչպես նաեւ հանդիպմանը ներկա կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներին՝ աղոթելով, որ Աստված խաղաղության, սիրո եւ համագործակցության մեջ պահի Բուլղարիայում ապրող ժողովուրդներին, օրհնի եւ զորացնի հոգեւոր առաջնորդների առաքելությունն իրենց զավակների կյանքում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼՅԱՆ ԹԵՄ

Նոյեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով մեկնեց ԱՄՆ Հայոց Արեւելյան թեմ՝ հրավերով թեմական խորհրդի:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է զավազանակիր Տ. Անանիա աբեղա Ծապուրյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐ ՄԱՔՍԻՄ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Նոյեմբերի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Բուլղարիայի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան սինոդին, հոգեւորականությանը եւ բարեպաշտ ժողովրդին Բուլղարիայի Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Մաքսիմ Պատրիարքի մահվան կապակցությամբ:



Բուլղարիայի հոգեւոր առաջնորդների պատվիրակությունը Մայր Աթոռում

Հայրապետական ցավակցագրում ասվում է. «Երջանկահիշատակ Մաքսիմ Պատրիարքը մեծ նվիրումով եւ նախանձախնդրությամբ է հովվել Բուլղարիայի ուղղափառ քրիստոնյաներին: Նրա ջանքերի շնորհիվ Ուղղափառ Եկեղեցին նշանակալի առաջընթաց արձանագրեց Բուլղարիայում հոգեւոր կյանքի զարգացման եւ վերարթնացման գործում: Իբրեւ ճշմարիտ հովիվ Մաքսիմ Պատրիարքը նաեւ ուժեղ կամք դրսեւորեց՝ պահպանելու Եկեղեցու ուժն ու միությունը: Մենք ճանաչում էինք նրան իբրեւ խորը հոգեւոր նկարագրի տեր անձի:

...Մենք պիտի հիշենք մեր աղոթքներում հանգուցյալ Պատրիարքին եւ հայցենք Աստծուն՝ ընդունելու երջանկահիշատակ Մաքսիմ Պատրիարքի հոգին Իր Երկնային Արքայության մեջ»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՕԾՎԵՑ ԳԱՎԱՌԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Սույն թվականի նոյեմբերի 17-ին կայացավ Գավառի Ս. Կարապետ եկեղեցու օծման արարողությունը, որն այս տարվա ընթացքում ամբողջությամբ վերանորոգվել է:

Եկեղեցին կառուցվել է 1848 թ. Բայազետից ներգաղթած մեր հայրենակիցների կողմից՝ գլխավորությամբ Նոր Բայազետի հիմնադիրներ Արծրունի եղբայրների՝ Բարսեղ եւ Մկրտիչ աղաների: Եկեղեցու նորոգության աշխատանքներին մասնակցեցին ոչ միայն գավառցիները, այլ նաեւ այլ բնակավայրերից բազում հայորդիներ՝ դարձնելով այն համաժողովրդական մի ձեռնարկ:

Օծման արարողությանը ներկա էին ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ եւ հազարավոր գավառցիներ:

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՂՊՏԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԸՆՏԻՐ ՊԱՊԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

Նոյեմբերի 18-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Ամենայն Հայոց Հայրապետության պատվիրակությունը Եգիպտոսի Կահիրե քաղաքում մասնակցեց Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի նորընտիր Պապ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Թեւադրոս Բ.-ի գահակալության արարողությանը: Պատվիրակության կազմում էին Տավուշի թեմի առաջնորդ Տ. Եզնիկ արքեպս. Պետրոսյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպս. Մնացականյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպս. Մանուկյանը:

Պատարագի սրբազան արարողությունից հետո պատվիրակության անդամներն առանձին հանդիպում ունեցան Թեւադրոս Բ. Պապի հետ՝ Ղպտի Եկեղեցու գահակալին փոխանցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի եղբայրական ողջույններն ու շնորհավորական ուղերձը: Նորին Սրբության շնորհավորագրում մասնավորապես ասված է. «Աստծու կամքով եւ ղպտի հավատացյալների վստահությամբ Ձերդ Սրբությունը, որպես Ս. Մարկոսի հետնորդ, արժանացել է երկրի համար այս կարեւոր շրջանում ղպտի քրիստոնյաներին ծառայելու եւ նրանց հոգեւոր կարիքները հոգալու պատվին: Ամենակարող Աստծու զորակցությամբ Ձերդ Սրբությունը կշարունակի Ձեր երջանկահիշատակ նախորդի աշխատանքը՝ նաեւ նպաստելով եկեղեցիների միջեւ երկխոսությանը...

Մեր երկու դավանակից եկեղեցիները դարեր շարունակ կապված են իրար հետ հավատքի անշեղ միությամբ եւ Քրիստոսի անմնացորդ սիրով: Մեր երկու եկեղեցիների միջեւ եղբայրական հարաբերությունները արտահայտվել են երկկողմանի հանդիպումներով եւ էկումենիկ շարժման մեջ մեր ներկայացուցիչների համագործակցությամբ: Մենք աղոթում ենք, որ այս հարաբերությունները նորովյալ ոգով շարունակվեն Ձերդ Սրբության գահակալության օրոք՝ արձանագրելով նոր ձեռքբերումներ»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ԻՈՍԻՖ ԿՈԲԶՈՆԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նոյեմբերի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Մայր Աթոռի Վանական խորհրդի նախագահ, Հրապարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանն ընդունեց ԽՍՀՄ ժողովրդական

արքեպս Իոսիֆ Կոբզոնի գլխավորած պատվիրակությունը՝ ուղեկցությամբ ՀՀ Մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի:

Ողջունելով փիար Կոբզոնի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Նաթան Սրբազանը նրան փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, ողջույններն ու բարեմաղթանքները:

Իր խոսքում Սրբազան Հայրը գոհունակությամբ անդրադարձավ Հայաստան այցի նպատակին՝ Երևանում կայանալիք բարեգործական համերգին՝ ընդգծելով նաև, որ բարեգործությունը հիմնական նպատակն է քրիստոնեության առաքելության: Այս առիթով Նաթան Սրբազանը շնորհակալություն հայտնեց Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ Ի. Կոբզոնի ցուցաբերած մշտական ջերմ վերաբերմունքի համար՝ մաղթելով Երկնավորի զորակցությունը նրա աստվածահաճո նախաձեռնություններին:

Իր հերթին Ի. Կոբզոնը, ուրախություն հայտնելով Մայր Աթոռ այցի առիթով, նշեց, որ հպարտ է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստացված շքանշանի համար և ուր էլ որ հայ է հանդիպում, միշտ հիշում է Հայաստանը և Ս. Էջմիածինը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նշանավոր արվեստագետի կողմից հայ ժողովրդին դժվարին փարիներին ցուցաբերած օգնությանը, ինչպես նաև հասարակության կյանքում հոգևոր արժեքների ամրապնդման կարևորությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## «ԱՍՊԵՏ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ» ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԻՄՈՆԻՆ

ԱՄՆ Արևելյան հայոց թեմ կատարած հայրապետական այցի ընթացքում, նոյեմբերի 22-ին՝ Գոհաբանության օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ազգային բարերար տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնին հանձնեց 2011 թ. փետրվարին նրան շնորհված «Ասպետ Սուրբ Էջմիածնի» հայրապետական շքանշանը՝ Հայրենիքին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և աշխարհասփյուռ հայ ժողովրդին մատուցած բացառիկ ծառայությունների համար:

Ամենայն Հայոց Հայրապետը բարձր է գնահատել տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի ավանդը ազգային և եկեղեցական կյանքում: Մեծազնիվ բարերարը դուստրն է ազգանվեր ու եկեղեցասեր ծնողների՝ ՀՀ ազգային հերոս և ՀԲԸՄ ցկյանս նախագահ հոգելույս փիար Ալեք Մանուկյանի և տիկին Մարի Մանուկյանի: Տիկին Լ. Մանուկյան Սիմոնը, իբրև ՀԲԸՄ նախագահ, սատար է կանգնել Հայրենիքին ինչպես խորհրդային, նույնպես և ՀՀ անկախության տարիներին: Հատկապես մեծ է նրա զորակցությունը նորանկախ Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին: Նրա ակնառու նախաձեռնությունների շարքին է պատկանում Ամերիկյան համալսարանի ստեղծումը Հայաստանում:

Բազմամյա իր ծառայության ընթացքում ՀԲԸՄ նախագահը մշտապես զորավիգ է եղել նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Հայոց Եկեղեցուն: Նրա պաշտոնավարման ընթացքում սկիզբ առան և հաջող շարունակում են իրենց գործունեությունը Մայր Աթոռի և ՀԲԸՄ համատեղ կրթական և ընկերային ձեռնարկները Հայաստանում՝ Հայորդյաց տների և բարեգործական ճաշարանների ծրագրերը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնին փոխանցվեց «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոնը: Մեծազնիվ բարերարի ջանքերով Մանուկյան ընտանիքի կողմից հատկացվեց Մայր Աթոռի Միածնաէջ Ս. Տաճարի պահպանության հիմնադրամ, նաև նորոգվեց Մայր Տաճարը, բարեզարդվեց Մայր Աթոռի տարածքը, կառուցվեցին միաբանական և վարչատնտեսական շենքերը: Նրա իշխանավայել ընծաբերումներով Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կառուցվեց Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, Մալաթիա-Սեբաստիա համայնքում վեր խոյացավ Ս. Երրորդություն հոյակերտ եկեղեցին, ավարտին է մոտենում Արաբկիրի վարչական շրջանի եկեղեցու շինարարությունը:

Տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնն այսօր ևս սրտաբուխ առատաձեռն նվիրատվություններով շարունակում է զորավիգ լինել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությանը և Ամենայն Հայոց Հայրապետին՝ վկայելով իր հավատը, սերն ու հավատարմությունը Ազգի, Եկեղեցու և Հայրենիքի հանդեպ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ



Գավառի Ս. Կարապետ եկեղեցին



Մայր Աթոռի պատվիրակությունը Թեւադրոս Բ.-ի գահակալությանը

## ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ ՎԵՐԱՕԾՎԵՑ Ս. ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Գուգարաց թեմում անցնող 15 տարիների ընթացքում՝ 1996-2012 թթ., նոր կառուցվել, վերանորոգվել եւ վերակառուցվել է 34 եկեղեցի, որոնցից 9-ը նորակառույց են, իսկ 25-ը՝ վերանորոգված եւ վերակառուցված: Ներկայումս թեմում կանոնավոր ծառայություն է մատուցվում գործող 39 եկեղեցում: Սույն տարում Լոռու մարզում վերաօծված 3՝ Մեծ Պառնի, Չկալով եւ Զորագյուղ համայնքների եկեղեցիներին հաջորդեց Վանաձորի Խնձորուտ թաղամասի Ս. Վարդան Զորավար եկեղեցու վերաօծումը:

Եկեղեցին գտնվում է քաղաքի Խնձորուտ թաղամասում՝ Տանձուտ գետի աջ ափին, գերեզմանոցի հարավային մասում: Սրբավայրը կառուցվել է Է.-Թ. դարերում, Խորհրդային շրջանում ծառայել է որպես պահեստ: 1857 թ. եկեղեցին վերակառուցվել է, սակայն 1988 թ. Սպիտակի աղետալի երկրաշարժի հետեւանքով կրկին դարձել էր վթարային:

Եկեղեցին անդառնալի կորուստից փրկելու, այն սկզբնական նպատակին ծառայեցնելու եւ սրբազան արարողություններ կատարելու նպատակով Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սեպուհ արքեպ. Չուլջյանի օրհնությամբ եւ հիմնադիր բարերարներ Մարտուն եւ Արեն Աղաբաբյանների նախաձեռնությամբ ու բարեպաշտ հավատացյալների աջակցությամբ 2012 թ. եկեղեցին վերանորոգվեց: Սույն թվականի հուլիսի 7-ին ձեռամբ թեմակալ առաջնորդի օծվեց եւ նորակառույց զանգակատան տանիքին տեղադրվեց եկեղեցու բարձրադիր խաչը: Տարածքը բարեկարգվեց, գոյություն ունեցող պատմական խաչքարերը առանձնահատուկ բծախնդրությամբ տեղադրվեցին եկեղեցու շրջակայքում, եւ եկեղեցին ուխտավայրին վայել տեսք ստացավ:

Նոյեմբերի 22-ին թեմակալ առաջնորդ Սեպուհ արքեպ. Չուլջյանի ձեռամբ եւ թեմի հոգեւոր դասի մասնակցությամբ օծվեց Ս. Սեղանը, Խորանը եւ Մկրտության Ս. Ավազանը: Արարողության ավարտին նորաօծ եկեղեցում պատարագ մատուցեց Տեր Ներսես քահանա Ղալայանը՝ մասնակցությամբ հոգեւոր հովիվներ Տ. Օհան, Տ. Վահան եւ Տ. Սողոմոն քահանա հայրերի: Արարողությանը ներկա էին մարզային, քաղաքային իշխանության ներկայացուցիչներ:

Արարողության ավարտին Սրբազան Հայրը օրհնեց եկեղեցու վերակառուցման նախաձեռնողներ՝ Մարտուն եւ Արեն Աղաբաբյաններին ու բարեպաշտ հավատացյալներին՝ շնորհավորելով աղոթավայրի վերաօծման առթիվ, եւ առ ի երախտագիտություն՝ Օրհնության գիր հանձնեց բարերարներին:

Սրբազան Հայրը շնորհակալական խոսք ասաց եկեղեցու շինարարական աշխատանքներին իրենց նյութական ու բարոյական աջակցությունը ցուցաբերած բոլոր ազնիվ հայրենակիցներին, այդ թվում նաեւ եկեղեցուն սրբապատկերներ նվիրաբերած անձանց՝ Արթուր Նալբանդյանին, Սամվել Դարբինյանին, Ռոբերտ Ավալյանին, Արեն Աղաբաբայանին, Արմեն Վարդումյանին, Արմեն Պետունցին, Արամ Հախինյանին, Վահե Դոխոյանին, Արթուր Ղալայանին, Արմեն Վարդումյանին եւ ռուսաստանաբնակ Խաչատուր Սարգսյանին, նրանց ընտանիքներին:

Հավարտ Ս. Պատարագի մասնակիցներին բարերարների կողմից մատուցվեց երախտիքի ու գոհության մատաղ:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵՑ «ՀԱՅԱՐՏՈՒՆ» ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 23-ից 26-ը Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում հյուրընկալվեց Արցախի երիտասարդական ֆորումի պատվիրակությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերով փոխնախարար Գայանե Գրիգորյանի գլխավորությամբ: Արցախի երիտասարդական ֆորումի թվով 16 մասնակիցներ, որ ներկայացնում էին Արցախի տարբեր շրջանները, «Միասնության մեջ է մեր ուժը» ծրագրի շրջանակներում ժամանել էին Վրաստան՝ «Հայարտուն» մշակույթի կենտրոնի երիտասարդական թեւի հետ կապեր հաստատելու, համատեղ ծրագրեր իրականացնելու, Վրաստանի տեսարժան վայրերին ծանոթանալու նպատակով:

Արցախցի հյուրերի այցը մեկնարկեց Ջավախք ուղեւորությամբ: «Հայարտուն» մշակույթի կենտրոնի համակարգող Լեւոն Չիդիլյանի նախաձեռնությամբ ծանոթությունը Ջավախք երկրամասի հետ սկսվեց

հայ մեծ քնարերգու Վահան Տերյանի ծննդավայր Գանձայից, որտեղ հյուրերը եղան Տերյանի տուն թանգարանում, աղոթք բարձրացրին Գանձայի Ս. Կարապետ, Նինոծմինդայի Ս. Սարգիս, Ախալքալակի Ս. Խաչ եկեղեցիներում՝ ստանալով հոգևոր հովիվներ Տեր Արմաշ քահանա Պողոսյանի և Տեր Տաթև քահանա Մարուքյանի օրհնությունը: Հյուրերը հիացան Փարվանա լճի գեղեցկությամբ: Իսկ Ախալքալակի երիտասարդական կենտրոնում կայացած հանդիպումը դարձավ փոխադարձ ծանոթության, ծրագրերի կանխագծման, փորձի փոխանակման հնարավորություն: Ջավախքում արցախցի հյուրերին ջերմորեն ընդունեցին Ախալքալակում՝ Արամ Սանոսյանի, Ծալկայի շրջանի Ղուշչի գյուղում՝ Սամվել Խոտմարյանի ընտանիքները:

Հետաքրքիր և հագեցած էր օրը նաև Թբիլիսիում: Պատվիրակության անդամները իրենց խոնարհումը բերին Թբիլիսիի Խոջիվանքի հայոց պանթեոնում հողարկավորված մեծերի շիրիմներին: Այնուհետև «Հայարտուն» մշակույթի կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում կայացավ կենտրոնի երիտասարդական թևի անդամների և արցախցի հյուրերի հանդիպումը: Փոխնախարար Գայանե Գրիգորյանը հավաքվածներին ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարության աշխատանքները, արժևորելով երիտասարդական ծրագրերը: Խոսվեց երիտասարդական ֆորումի մասին, որի շրջանակներում իրականացվեց Արցախի երիտասարդական պատվիրակության այս այցը: Այնուհետև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի «Հայեր» ակումբի նախագահ Համբարձում Արզանյանը կազմակերպեց հայկական ազգային-ավանդական խաղերի մրցույթ, որին սիրով ներգրավվեցին Վրաստանի և Արցախի երիտասարդները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երիտասարդական պատվիրակության հետ հանդիպմանը Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը հետաքրքրվեց այն ծրագրերով, որ կանխագծել են համատեղ իրականացնել «Հայարտուն» կենտրոնի երիտասարդական թևը և Արցախի երիտասարդական ֆորումը:

Հյուրընկալության վերջին օրը արցախցի երիտասարդները դիտեցին Հավլաբարում գտնվող Դավթյան ընտանիքի տիկնիկների խաղը և հիացան երեկոյան Թբիլիսիի գեղեցկությամբ: Բաժանումը հուզմունալից էր, կրկին հանդիպելու՝ այս անգամ արդեն Արցախում, երկուստեք որոշմամբ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԻ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎ ՋԱՎԱԽՔՈՒՄ

Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի Ընդհանուր առաջնորդական փոխանորդության Ախալքալակի առաջնորդարանում, ընթացիկ տարվա նոյեմբերին տեղի ունեցավ թեմի հոգևոր դասի և պաշտոնեության համատեղ ժողով: Թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանի աղոթքով և օրհնության խոսքով բացվեց ժողովը և օրակարգի հաստատումից հետո ատենապետությունն ստանձնեց Սամցխե-Ջավախքի Ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգեն աբեղա Սալբիյանը:

Թբիլիսիի, Բաթումի, Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի հայ համայնքների հոգևոր հովիվները ներկայացրեցին անցնող տասնմեկ ամիսների գործունեությունը: Հատկանշական էր Սամցխե-Ջավախքի հոգևոր հովիվների առաքելությունը հատկապես գյուղական համայնքներում. յուրաքանչյուր քահանա հովվում է 10-25 համայնք, հետևում է տեղում վերականգնվող եկեղեցիների շինաշխատանքներին, կազմակերպում բազմաբնույթ միջոցառումներ: Տեղեկացվեց, որ բարվոք գործում են կիրակնօրյա դպրոցները և Արալուվա գյուղի մանկապարտեզը: Թբիլիսիի և Բաթումիի հոգևոր հովիվները զեկուցեցին եկեղեցական, կրթամշակութային աշխատանքների մասին:

Կարևորվեց անհատական խոստովանության կարգի ամրապնդումը, համայնքային կյանքում երիտասարդության հետ համագործակցությունը, եկեղեցական տոները տոնախմբության վերածելով՝ մարդկանց եկեղեցուն մերձեցնելը, ծիսարարողությունները քրիստոնեական քարոզչության ամբիոն դարձնելը, ինչպես նաև լրատվության միջոցները ավետարանական պատգամների համար օգտագործելը:

Հոլթացս խորհրդաժողովի, քննարկվեցին նաև ծիսաարարողակարգային, կարգապահական և նոր նշանակումների հարցեր: Խոսվեց Սիրիայի հայության օգնելու, Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին պատրաստվելու մասին:

Առաջնորդ Հայրը դրական գնահատեց հոգևոր դասի գործունեությունը և հորդորեց հետևողականորեն կյանքի կոչել Տիրոջ խաչով օրհնված եկեղեցաշունչ ու ազգանպաստ տեսիլքներն ու երազանքները:



Արցախի երիտասարդական պատվիրակությունը Գանձայում

Այնուհետեւ ելույթ ունեցան պաշտոնեության ներկայացուցիչները: Խոսելով Վիրահայոց համայնքի մասին՝ կարեւորվեց եկեղեցիների, «Հայարտուն» կենտրոնի, Վրաստանի արվեստի միությունների՝ Հովհ. Թումանյանի անվան «Վերնատուն» կենտրոնի ուղղությամբ կատարվող աշխատանքը: Հանգամանալից խոսվեց տարածաշրջանի ու մայրաքաղաքի հայկական կառույցների միջեւ համագործակցության խորացման մասին, անդրադարձ եղավ թեմի հեռավոր համայնքներում Թբիլիսիի հոգեւոր դասի մասնակցության, արտագնա պատարագների մատուցման շարունակականության, շրջաններում կրթամշակութային միջոցառումների կազմակերպմանը: Պետական կառույցների հետ առանց միջնորդների գործելու անհրաժեշտությունը բարձրացնելով՝ որոշվեց Վրաստանի նոր իշխանություններին ներկայացնել համայնքային կյանքի խնդիրները եւ դրանց լուծման ուղիները: Առաջնորդը հորդորեց հոգեւոր սպասավորներին եւ պաշտոնեությանը՝ աշխուժացնել աշխատանքը կրթական հաստատությունների հետ, թեմական կառույցների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջազգային կազմակերպությունների հետ աշխատանք տանել նյութական միջոցներ հայթայթելու համար: Առաջարկվեց նոր մոտեցումներ մշակել Խոջիվանքի հայ գրողների եւ հասարակական գործիչների պանթեոնում հողարկավորության հարցերի կարգավորման, սեփական տեղեկատվական միջոց ստեղծելու խնդրի լուծման ուղղությամբ:

Սրբազան Հայրը կարեւորեց եկեղեցական դասի եւ աշխարհիկ պաշտոնեության փոխհամագործակցությունը Վրացական Ուղղափառ Եկեղեցու, վրաց պետության, միջազգային կազմակերպությունների եւ Վրաստանում ՀՀ դեսպանության հետ:

Թեմակալ առաջնորդը օրհնության եւ գնահատանքի խոսք հղեց ՀՀ սփյուռքի, մշակույթի, կրթության եւ գիտության, երիտասարդության եւ սպորտի նախարարություններին, Գ. Գյուլբենկյան հաստատության, «Ջինիշյան հիշատակի հիմնադրամին», «Հայարտան», Ս. Գեւորգ եւ Ս. Էջմիածին եկեղեցիների հոգաբարձուների խորհուրդներին եւ անհատ բարերարներին՝ թեմի առաքելությանը աջակցելու համար:

Հոգեւոր դասի եւ պաշտոնեության համատեղ ժողովը փակվեց միասնական աղոթքով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ՕԾՎԵՑԻՆ ՏՎԵՐ ՔԱՂԱՔԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

Նոյեմբերի 24-ին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի հանդիսապետությամբ եւ հոգեւոր դասի մասնակցությամբ (Տ. Պողոս աբեղա Վարդանյան, Տ. Թադեոս քահանա Տերտերյան, Դանիել սարկավագ Խանանյան) կատարվեց Տվեր քաղաքի նորակառույց եկեղեցու խաչերի օրհնության եւ օծման արարողությունը:

Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 2000 թվականին: Բուն շինարարական աշխատանքները, սակայն, սկսվել են 2007 թ., երբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական բաժինը վերջնական լրամշակում եւ հաստատում է եկեղեցու նախագիծը: Եկեղեցին կառուցվում է համայնքի հավատավոր հայորդիներ Վալերի Առուշանովի, Վալերի Հակոբյանի եւ Գագիկ Ցագիչյանի բարերարությամբ: Երեսուներեք մետր բարձրությամբ, հայկական ավանդական ճարտարապետության ոճով կառուցված եկեղեցին գտնվում է քաղաքի կենտրոնում եւ ունի 2500 քմ տարածք: Քաղաքի համապարած աղյուսե շինությունների կողքին հայոց տուֆակերտ եկեղեցին իսկական զարդ է, աղոթքի սքանչելի նոր սրբավայր բնակիչների համար:

Եկեղեցուն կից կառուցվել է նաեւ եռահարկ մի շենք, որտեղ ընդգրկված է դպրոցը, հովվատունը, թանգարանը եւ հանդիսությունների սրահը: Ինչպես եկեղեցու, այնպես եւ կից շինության ներքին հարդարման աշխատանքները դեռ չեն ավարտվել: Շուտով կտեղադրվեն պատուհանները եւ ձմռանը հնարավոր կլինի անխափան շարունակել գործը: Քանի դեռ ընթացքի մեջ էին շինարարական աշխատանքները, Գագիկ Ցագիչյանի նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ 2005 թ. Հայաստանից խաչքար են բերում, եկեղեցու բակում ծածկով փոքրիկ մի անկյուն ստեղծում՝ աղոթքի, ուխտի եւ մոմավառության համար:

Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքարի շուրջ տարիներ շարունակ Տվերի աղոթասեր հայորդիները հավաքվել են, ազգային ու եկեղեցական տոներ նշել եւ հույսով սպասել, որ եկեղեցին շուտով դռները կբացի: Ըստ վիճակագրական տվյալների՝ Տվերի մարզում ապրում է քսան հազար հայ, իսկ Տվեր քաղաքում՝ վեց հազար: Եկեղեցական խորհրդի ատենապետ Գագիկ Ցագիչյանի խոսքով՝ ամեն հայ իր լուման ունի աղոթատան կառուցման գործում: Բնակիչները պատմում են, որ մեծաթիվ համայնքը եկեղեցու կարիք միշտ զգացել է.

պսակի, մկրտության եւ այլ արարողությունների համար մարդիկ մեծ դժվարությամբ հասել են Մոսկվա կամ ռուսական եկեղեցի գնացել: Շինարարները վստահեցնում են, որ հաջորդ տարի եկեղեցին պատրաստ կլինի սրբազան արարողությունների համար:

Քաղաքի համայնապատկերը զարդարող նորաշեն եկեղեցու երկուսուկես մետր բարձրությամբ ոսկեպատ խաչերը կրկնօրինակն են Մոսկվայում կառուցվող հայկական եկեղեցու խաչերի:

Խաչերի օրհնության եւ օծման գեղեցիկ ու խորհրդավոր արարողությանը ներկա էին քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ հյուրեր, բարեպաշտ հայորդիներ:

Արարողության ընթացքում ջրով եւ գինով լվացվեցին խաչերը, ապա սրբալույս մյուռոնով օծվեցին:

Արարողության ավարտին ներկաներին հայրական իր խոսքն ուղղեց Սրբազան հայրը՝ գոհություն հայտնելով Ամենակալ Տիրոջը, ում կամքով եւ ողորմությամբ կառուցվեց աղոթատունը: Սրբազան Հայրն օրհնության խոսք ասաց բարերարներին, որոնց նվիրյալ եւ աստվածահաճո աշխատանքով քար առ քար վեր բարձրացավ եկեղեցին:

«Այս սուրբ գործը, որին հաճերաշխ եւ միակամ լծվեց Տվերի հայ համայնքը, վկայում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ հայրենիքին հավատարիմ ապրելու, նախնյաց արժեքները սրբությամբ պահպանելու գիտակցության մասին: Այսօր ցնծում է մեր հոգին, որովհետեւ օրհնված եւ օծված Ս. Խաչը բազմել է հայոց եկեղեցու գմբեթին՝ որպես հաղթության եւ փրկության նշան, որի զորությամբ պիտի շարունակվի կյանքը Ռուսիո հողում՝ հաստատուն հավատքով, շեն ու բարեկեցիկ»: Ապա Սրբազան Հայրը հորդորեց Տվերի հայերին առավել աշխուժորեն լծվել համայնքի հոգեւոր եւ մշակութային կյանքի կազմակերպմանը, ապրել նվիրագործված կենարար խաչի խորհուրդով, որպեսզի Տերը նորոգի ամենքին հավատքի եւ հույսի մեջ եւ արժանի դարձնի Խաչից բաշխվող օրհնությանը:

«Անսասան մնացեք առ Աստված հավատի մեջ եւ ձեր կյանքը հաստատեցեք աստվածահաճո նոր գործերով», - ասաց թեմակալ առաջնորդը:

Արարողության ավարտին բոլորն ուրախ սրտով, միասնաբար Տերունական աղոթքն ասացին, որից հետո ներկա հավատացյալներին բաժանեցին օրհնված մատաղ:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## ՀԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԻՐԱՀԱՅ ԱՐՁԱԿԱԳԻՐՆԵՐ Ծ. ԹՈՐԳՈՄՅԱՆԻՆ ԵՒ Մ. ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

Վրաստանի հայ մտավորականների միության նախաձեռնությամբ եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի աջակցությամբ, նոյեմբերի 25-ին Գալուստ Գյուլբենկյան սրահում կայացավ վիրահայ արձակագիրներ Ծերուն Թորգոմյանի եւ Մկրտիչ Ասլանյանի հուշ-երեկոն: Միջոցառմանը ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, գրող թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Ծերուն Թորգոմյանի թոռ, Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Լեւոն Թորգոմյանը:

Բացելով երեկոն՝ Վրաստանի հայ մտավորականների միության նախագահ Ռուբեն Թորոսյանը ներկայացրեց վիրահայ գրականության հայտնի դեմքեր, բազմաթիվ պատմվածքների, վեպերի ու վիպակների հեղինակներ Ծերուն Թորգոմյանի եւ Մկրտիչ Ասլանյանի կենսագրությունները՝ կարեւորելով այս հեղինակների անունները եւ ստեղծագործությունները նոր սերնդին հայտնի ու սրտամոտ դարձնելու պարագան:

Բանաստեղծ-թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը հանգամանալից ներկայացրեց Ծերուն Թորգոմյանի ստեղծագործական աշխարհը: Անահիտ Բոստանջյանը, որ 18 տարեկանից եղել է երկու աչքից կույր գրողի գրական քարտուղարը, Թորգոմյան արձակագրի ստեղծագործությունների առաջին վկան է: «Փաստորեն Թորգոմյանը, ինչպես նաեւ Բենիկ Սեյրանյանը եղել են իմ գրական ուսուցիչները», - ասաց Անահիտ Բոստանջյանը:

Խոսելով թուրքական յաթաղանից մազապուրծ փրկված գրողի գրական գործունեության մասին, բանաստեղծ-թարգմանիչը արժեւորեց նրա ցեղասպանության թեմայով գրված «Անմար կրակներ» վեպը, «Լաչակս գլխից» պատմվածքը, որի հիման վրա 1968-ին «Հայֆիլմը» նկարահանել է «Փախստականներ»



Վանաձորի Ս. Վարդան Զորավար եկեղեցին



Տվերի եկեղեցու խաչերի օծումը

ֆիլմը: Անդրանիկ փաշայի սխրագործությունները, Վանի հերոսամարտը, Վան քաղաքը կազմում են Թ-որգոմյանի ստեղծագործության առանցքը: Ծերուն Թ-որգոմյանը մեծ կապեր ուներ վրաց գրողների հետ: Նրա գործերը հիանալի կամուրջ են մեր ժողովուրդների մերձեցման: Նա եղել է «Կամուրջ» պարբերականի խմբագրական խորհրդի անդամ, Վրաստանի գրողների միության անդամ եւ ժամանակին գլխավորել է «Հրազդան» հանդեսը («Կամուրջ» պարբերականի նախկին անվանումը): Ա. Բոստանջյանն իր խոնարհումը բերեց Թ-որգոմյան ամուսինների պայծառ հիշատակին:

Հետաքրքիր ու բովանդակալից էր բանասիրական գիտ. դոկտոր Էմմա Ախտյանի խոսքը Մկրտիչ Ասլանյանի կյանքի եւ ստեղծագործական աշխարհի մասին: Գրականագետը հիշատակեց գրողի «Աշխեն Սաթյան», «Երջանկության արահետով» վեպերը, «Աներեւույթ ճակատ», «Անհանգիստ բնավորություններ», «Փոթորիկ» վիպակները եւ պատմվածքները, որտեղ գլխավոր հերոսը մարդն է իր կյանքով ու աօրյա խնդիրներով:

Վրաստանի արվեստի վաստակավոր գործիչ Միքայել Գրիգորյանը, վերհիշելով խորհրդային բռնակալության տարիները, արժեւորեց այն եռանդուն հայապահպան գործունեությունը, որ ծավալել էր Մկրտիչ Ասլանյանը՝ Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղում տարբեր տարիներ պաշտոնավարելիս: Լինելով Վրաստանի ռադիոհաղորդումների հայկական խմբագրության հիմնադիրն ու երկար տարիների ղեկավարը՝ Մ. Ասլանյանի հեռատես մոտեցմամբ վրացական ռադիոյի ձայնադարանը հարստացել է հայկական հազվագյուտ ձայնագրություններով, որոնք ցայսօր կազմում են ռադիոյի ձայնադարանի ոսկե ֆոնդը:

«Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, անդրադարձ կատարելով անցյալի մեծերին արժանին մատուցելու կոչին, բարձրաձայնեց 2013 թվականից «Վրաստան» թերթում «Մեր անցյալի մեծերը» խորագրով շարք սկսելու մասին:

Հավարտ միջոցառման օրհնության խոսք ասաց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպս. Միրզախանյանը: Դիմելով կազմակերպիչներին՝ նա կոչ արեց նմանօրինակ երեկոների միջոցով, նաեւ թերթի եւ հուշերի վերատպատումով, մոռացության փոշուց վերհանել այս իրավամբ մեծ ստեղծագործողների անունները եւ գործերը: Արժեւորելով հայոց կոտորածի մասին ականատեսի ձեռքով գրված ստեղծագործությունները՝ Սրբազան Հայրը հորդորեց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի կապակցությամբ ընթերցողի սեղանին դնել Ծերուն Թ-որգոմյանի, Մկրտիչ Ասլանյանի այն գործերը, որոնք նվիրված են Մեծ Եղեռնի արհավիրքների, Անդրանիկ փաշայի մեծագործությունների, գաղթականների փվայտանքների նկարագրությանը:

Հուշ-երեկոյին հնչեցին նաեւ հատվածներ Ծերուն Թ-որգոմյանի եւ Մկրտիչ Ասլանյանի ստեղծագործություններից, որոնց գեղեցիկ ընթերցանությամբ հանդես եկավ թիվ 104 դպրոցի աշակերտուհի Լիզա Թ-որոսյանը: Հիշատակի երեկոն համեմված էր նաեւ Նինա Կարապետյանի, Ռուբեն Ոսկանյանի, Հենրիխ Պետրոսյանի հիասքանչ երգերով եւ Կարեն Միրզոյանի դաշնամուրային նվագակցությամբ:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

## «ԴԻԱԿՈՆԻԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ» ՀԱՄԱԺՈՂՈՎ
## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 27-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, օրհնությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ նախաձեռնությամբ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական «Կլոր սեղան» հիմնադրամի, սկսվեց «Դիակոնիայի ուսուցում» թեմայով երկօրյա համաժողովը, մասնակցում էին եկեղեցականներ, աստվածաբաններ Հայաստանից, Եւրոպայից ու Կենտրոնական Ասիայից, ներկայացուցիչներ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամից, ԵՊՀ սոցիոլոգիայի եւ աստվածաբանության ֆակուլտետներից, «Վորլդ վիժն» եւ «Ամքոր» կազմակերպություններից:

Համաժողովը բացվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վանական խորհրդի նախագահ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի խոսքով: Այնուհետեւ ողջույնի խոսք ասացին Կլոր սեղանի գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը եւ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանը:

Ժողովի նիստերը նախագահեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի փոխօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Առաջին նիստին հանդես եկան Մայր Աթոռի կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը («Եկեղեցի, դպրոց եւ սոցիալական սպասավորություն»), Գեւորգյան հոգեւոր ճեմարանի Աստվածաբանության ամբիոնի վարիչ Հրաչ սարկավագ Սարգիսյանը («Աստվածաբանական կրթություն. տեսլականներ ու վերանայումներ» եւ «Դիակոնիայի ուսուցումը Գեւորգյան հոգեւոր ճեմարանում») եւ ԳՀԽ դասախոս Կամո Վարդանյանը («Դիակոնիկ աշխատանքի հոգեբանական կողմերը»):

Երկրորդ նիստին զեկույցներ ներկայացրին Ռուսական Կլոր սեղանի ղեկավար Մարգարիտա Նելյուբովան («Դիակոնիկ սպասավորությունը Ռուս Ուղղափառ Եկեղեցում եւ էկումենիկ համագործակցությունը») եւ «Վորլդ վիժնի» հայաստանյան գրասենյակի փոխօրեն Գրեհեմ Սթրոնգը («Զարգացման ու դիակոնիկ աշխատանքը «Վորլդ վիժնի» ծրագրերում»):

Նույն օրը համաժողովի մասնակիցներին ընդունեց եւ Հայրապետական իր օրհնությունը բերեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Իր խոսքում Նորին Սրբությունն արդյունավետ աշխատանք մաղթեց համաժողովի մասնակիցներին եւ վստահություն հայտնեց, որ դիակոնիկ սպասավորության ոլորտում ձեռք բերված փորձառության փոխանակումը համաժողովի շրջանակներում եւ ձեւավորվող փոխադարձ համագործակցությունը բարի արդյունքներ պիտի տան:

Համաժողովը նոյեմբերի 29-ին ամփոփեց արդյունքները:

Երկրորդ օրվա նիստերը նախագահեցին ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Տ. Անուշավան եպս. Ժամկոչյանը եւ Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում եւ Արեւելյան Եւրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Տ. Ռաֆայել արքեպ. Մինասյանը:

Համաժողովի «Դիակոնիա. ծուխերի եւ համայնքների դերը» խորագիրը կրող երրորդ նիստին հանդես եկան Մեծ Բրիտանիայից Վերապատվելի Ռոջեր Փրիսը («Եկեղեցին եւ նրա դերը համայնքի վերափոխման գործում») եւ Օքսֆորդի համալսարանից (Մեծ Բրիտանիա) դոկտոր Հրաչ սրկ. Չիլինգիրյանը («Ծուխը որպես դիակոնիայի կենտրոն. հավատն ու սպասավորությունը գործողության մեջ»):

«Լավագույն օրինակներ, փորձի փոխանակում» խորագիրը կրող չորրորդ նիստին զեկույցներ ներկայացրին Տ. Ռաֆայել արքեպ. Մինասյանը («Ժամանակակից դիակոնիկ սպասավորությունը Հայ Կաթողիկե Եկեղեցում եւ էկումենիկ համագործակցությունը») եւ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դասախոս Աննա Ոսկանյանը («Սոցիալական աշխատանքի ուսուցման փորձը Հայաստանում. զուգահեռներ սոցիալական դիակոնիայի ուսուցման հետ եւ համագործակցության հեռանկարներ»):

Երկօրյա համաժողովը փակվեց Հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի գործադիր փոխօրեն դոկտոր Կարեն Նազարյանի ամփոփիչ խոսքով: Նա վերստին ընդգծեց դիակոնիայի ուսուցման անհրաժեշտությունը Հայաստանում եւ սպասավորության այս ոլորտում առկա փորձառության փոխանակման կարեւորությունը: Մասնակիցներն իրենց հերթին գոհունակություն հայտնեցին «Կլոր սեղան» հիմնադրամի եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի գործակցությամբ կազմակերպված համաժողովի առիթով՝ օգտակար եւ արդիական նկատելով արծարծված խնդիրները:

Նույն օրը համաժողովի մասնակիցներն այցելեցին Գեւորգյան հոգեւոր ճեմարան եւ հանդիպում ունեցան ուսանողության հետ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Հայելի» մամուլի ակումբում նոյեմբերի 28-ին հրավիրված ասուլիսի ընթացքում «Հայկական հաց» ֆիլմի ռեժիսոր Արմեն Գասպարյանի կողմից Մայր Աթոռի հասցեին հնչեցված մեղադրանքների կապակցությամբ հարկ ենք համարում տալ հետեւյալ պարզաբանումները:

Տիար Արմեն Գասպարյանից Մայր Աթոռում այս առնչությամբ ստացվել է չորս նամակ՝ հասցեագրված Ամենայն Հայոց Հայրապետին. առաջինը՝ նոյեմբերի 3, 2010 թ. «Հայկական հաց» ֆիլմի նկարահանումնե-



Համաժողով Մայր Աթոռում

րին աջակցելու խնդրանքով, երկրորդը՝ մարտի 19, 2012 թ. գրությունը՝ ֆիլմի վերաբերյալ կարծիք հայտնելու խնդրանքով, հոկտեմբեր 26, 2012 թվակիր երրորդ նամակով Ա. Գասպարյանը դիմում է Ս. Պետերբուրգի «Նեւսկիյ բլագովեստ» կինոփառատոնում իր մասնակցության համար աջակցության հայցումով եւ չորրորդ՝ 13 նոյեմբերի, 2012 թվակիր գրությունը, որով պահանջ է ներկայացվում բացատրություններ տալ ֆիլմի նկատմամբ Հայ Եկեղեցու կեցվածքի, հիշյալ կինոփառատոնի կողմից ֆիլմի ցուցադրության մերժման եւ դրանում Տ. Սարգիս քահանա Չոփուրյանի «դերակատարության» կապակցությամբ:

Բոլոր հիշյալ գրություններին տրվել են պատասխաններ: Առաջին նամակի արդյունքում տեղեկատվական համակարգի կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցությունը: Նկատի է առնվել նաեւ այն, որ Ա. Գասպարյանի ներկայացմամբ՝ Մոսկվայի առաջնորդանիստ եկեղեցու կառուցմանը վերաբերող այս ծրագիրը իրականացվում է Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Եզրաս եպիսկոպոսի գիտությամբ: Մինչդեռ հայաստանյան նկարահանումների ընթացքում արդեն հայտնի դարձավ, որ ֆիլմի ստեղծման համար թեմի հետ որեւէ համաձայնություն չի եղել, եւ նկարահանումները կատարվել են որդեգրված ընթացակարգի խախտումով: Այս նկատառումով տեղեկատվական համակարգը կասեցրեց իր համագործակցությունը՝ պահանջելով նախ խնդիրները կարգավորել Ռուսաստանի թեմի հետ:

Ա. Գասպարյանի երկրորդ գրության պատասխանը հղվել է մարտի 28, 2012 թ.՝ հորդորելով հարցը ներկայացնել Ռուսաստանի Հայոց թեմի միջոցով: Իսկ կինոփառատոնում մասնակցությունը հովանավորելու վերաբերյալ երրորդ գրությանն ի պատասխան հոկտեմբերի 29, 2012 թ. տեղեկացվել է, որ խնդրո առնչությամբ հարկ է դիմել Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդին:

Ինչ վերաբերում է չորրորդ գրության պատասխանին, ապա երբ տեղի ունեցավ հիշյալ ասուլիսը, շարադրված պատասխան գրության առաքումը կանխվեց: Այս առնչությամբ տեղեկացնենք, որ կինոփառատոնի կազմակերպիչ հանձնախմբի կողմից ֆիլմի մերժվելու համար Հայ Եկեղեցին որեւէ պատասխանատվություն չի կրում: Պետերբուրգի հոգեւոր հովիվ եւ փառատոնի կազմակերպիչ հանձնախմբի անդամ Տ. Սարգիս քահանա Չոփուրյանը հաստատել է այն, որ «Հայկական հաց» ֆիլմը Հայ Եկեղեցու անունից չի կարող ներկայացվել փառատոնին՝ այդ մասին նախնական համաձայնության բացակայության պատճառով:

Իսկ Հայ Եկեղեցու կողմից ֆիլմի արգելվելու մասին խոսք չի կարող լինել. այն ցուցադրվել է ս. թ. ապրիլի 24-ին Մայր Աթոռի «Շողակաթ» հեռուստաընկերության եթերում, ինչպես նաեւ, որքան հայտնի է, անարգել մասնակցել է տարբեր այլ փառատոների:

Հետեւապես, Մայր Աթոռի հասցեին հնչեցված մեղադրանքները, հալածանքների եւ անպատասխան գրությունների մասին բարձրաձայնումներն ավելի քան անհիմն են:

МАЙР — 

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

*ԼԱՆՋԱԽԱՉ ԿՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Մասիս քհն. Շահինյանը (Իրաքի թեմ)

*ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ*

Ս. Գեւորգ եկեղեցին (Ուկրաինայի թեմ)

Թեքեյան Մշակութային Միությունը՝ 65, «Զարթօնք» օրաթերթը՝ 70 եւ Բեյրութի Վահան Թեքեյան Ազգային Վարժարանը՝ 60 ամյա հոբելյանների առիթով (Լիբանան)

Թեմական պատգամավորական ժողովը (Ֆրանսիայի թեմ)

Հոգեւորականաց համագումարը (Ֆրանսիայի թեմ)